ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/314

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2021թ. թիվ 26/26-1/19559-2021 գրությամբ Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.11.2021թ. թիվ 1/18-2/75380-2021 գրության հիման վրա, 30.11.2021թ. թիվ 26/26-1/19559-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԼԳ-2021/314 ընթացակարգի շրջանակներում 03.12.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.11.2021թ. թիվ 1/18-2/75380-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՁ Գոռ Շեկոյան Էդուարդի-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հուլիսի 8-ին կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքները: 2021 թվականի նոյեմբերի 8-ին Վաճառողը մատակարարել է Պայմանագրով սահմանված 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, որից հետո 2021 թվականի նոյեմբերի 11-ին Վաճառողը ներկայացրել է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ դիմում:

Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված 2021թ. նոյեմբերի 16-ից Պայմանագիրը մասամբ միակողմանի լուծել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ ԱՁ Գոռ Շեկոյան Էդուարդի-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/314 ընթացակարգի շրջանակներում 03.12.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/314 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/314 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանի միջև 08.07.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի հավելված N 2-ով սահմանվել է մատակարարման հետևյալ ժամանակացույցը.

Ապրանքի							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափման միավոր	Միավոր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակ	Մատակարարման		
					հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
2	հատ	2970.00	59400.00	20	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	20	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
3	հատ	2970.00	59400.00	20	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	20	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
6	հատ	368.00	73600.00	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
7	հատ	640.00	128000.00	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

3. Պայմանագրի 8.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

4. Մասնակիցը ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարին ուղղված 11.11.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««08» հուլիսի 2021թ. կնքված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/10-2 ծածկագրով պայմանագրի 2-րդ և 3-րդ չափաբաժինները մատակարարել ենք պատշաճ կերպով, սակայն 6-րդ և 7-րդ չափաբաժիններում մեր կողմից տեղի է ունեցել տեխնիկական վրիպում՝ երկու դեպքում էլ ծառայություն մատուցող աշխատակիցը գնառաջարկի դաշտում մեկ զրո պակաս է մուտքագրել: Հարգելի պարոն Գևորգյան խնդրում ենք Ձեզ, հաշվի առնելով վերը նշված տեխնիկական խնդիրը 6,7-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծարել պայմանագիրը»:

5. Պատվիրատուն Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՁ Գոռ Շեկոյան Էդուարդի-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հուլիսի 8-ին կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքները: 2021 թվականի նոյեմբերի 8-ին Վաճառողը մատակարարել է Պայմանագրով սահմանված 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, որից հետո 2021 թվականի նոյեմբերի 11-ին Վաճառողը ներկայացրել է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ դիմում:

Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է 2021թ. նոյեմբերի 16-ից Պայմանագիրը մասամբ միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի չմատակարարված չափաբաժինների նկատմամբ հաշվարկված գումարի չափով որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ համապատասխանաբար 30240 (երեսուն հազար երկու հարյուր քառասուն) և 20160 (քսան հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ինչպես նաև տույժ՝ 5947 (հինգ հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 16.11.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2021թ. թիվ 26/26-1/19559-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 23.11.2021թ. թիվ 1/18-2/75380-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանի միջև 08.07.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի հավելված N 2-ով սահմանվել է մատակարարման հետևյալ ժամանակացույցը.

Ապրանքի							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Չափման միավոր	Միավոր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակ	Մատակարարման		
					հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
2	հատ	2970.00	59400.00	20	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	20	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
3	հատ	2970.00	59400.00	20	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	20	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
6	հատ	368.00	73600.00	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
7	հատ	640.00	128000.00	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3, 7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

Պայմանագրի 8.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Մասնակիցը ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարին ուղղված 11.11.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««08» հուլիսի 2021թ. կնքված ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/10-2 ծածկագրով պայմանագրի 2-րդ և 3-րդ չափաբաժինները մատակարարել ենք պատշաճ կերպով, սակայն 6-րդ և 7-րդ չափաբաժիններում մեր կողմից տեղի է ունեցել տեխնիկական վրիպում՝ երկու դեպքում էլ ծառայություն մատուցող աշխատակիցը գնառաջարկի դաշտում մեկ զրո պակաս է մուտքագրել: Հարգելի պարոն Գևորգյան խնդրում ենք Ձեզ, հաշվի առնելով վերը նշված տեխնիկական խնդիրը 6,7-րդ չափաբաժինների մասով միակողմանի լուծարել պայմանագիրը»:

Պատվիրատուն Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և ԱՁ Գոռ Շեկոյան Էդուարդի-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հուլիսի 8-ին կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/10-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքները: 2021 թվականի նոյեմբերի 8-ին Վաճառողը մատակարարել է Պայմանագրով սահմանված 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, որից հետո 2021 թվականի նոյեմբերի 11-ին Վաճառողը ներկայացրել է պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ դիմում:

<u>Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է 2021թ. նոյեմբերի 16-ից Պայմանագիրը մասամբ միակողմանի լուծել:</u>

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի չմատակարարված չափաբաժինների նկատմամբ հաշվարկված գումարի չափով որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ համապատասխանաբար 30240 (երեսուն հազար երկու հարյուր քառասուն) և 20160 (քսան հազար հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ինչպես նաև տույժ՝ 5947 (հինգ հազար ինը հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 16.11.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***10 օրից*** ավելի:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանը խախտել է իր և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջև 08.07.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2021թ. թիվ 26/26-1/19559-2021 գրությամբ Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Գոռ Էդուարդի Շեկոյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**